

ափէն 20 վայրկեան բարձր, Բաճօյի կէտուկի հիւսիսային խիտ հակեալ զառիվայրին վերայ 8 անուոր գաղթական թուրք զիւղ է: Աբաս զիւղէ 1 <sup>1</sup>/<sub>2</sub> ժամ յարեւելս՝ զբաւած է ընդարձակ մարգագետիններ, որ կը տարածուի մինչև կէտուկի գագաթն, 2 ժամ տարածութիւն ունի յափունս Շեռեանայ և սակաւ ինչ վարելահողեր, ուր կը մշակին միայն ցորեան և գարի: Բազմաթիւ ձորերու ափերն ունի մանր մունր ծառներով անտառակներ, անմատչելի վայրաց մէջ այս անտառակներն բաւական աճած են, իսկ մատչելի վայրերն հետքն անգամ անհետացնել կը ճգնին Գոմքի գաղթական թուրքեր, ծառներու վերին մասն, բունը արդէն սպառած են, այժմ ձեռնարկած են արմատահան անել և տանել Թ. գալէ վաճառել իբրև վառելիք:

## Ս Ո Ւ Ր Բ Գ Է Ո Ր Գ

Գոմքից յարեւելս հանդէպ Բաւոյ զիւղի մէկ ժամ հեռաւորութեամբ բարձր զիրքի մի վերայ կառուցուած է Ս. Գէորգ ուխտատեղին՝ ուր Ս. Գէորգայ տօնին բազմաթիւ ժողովուրդ կը զիմեն յուխտադնացութիւն:

Բաւոյ զիւղէն մեր ընթացք բռնեցինք <sup>1</sup>/<sub>4</sub> ժամ ի հարաւ արեւելս, անցանք մարգերու միջէն, և խիտ առ խիտ իրարու մօտ բուսած ուռենի բողբոջներու և

1. Ս. Գէորգ 3 <sup>1</sup>/<sub>2</sub> ժամ հեռաւորութիւն ունի Թ. գալէից եւ կայ հարաւային եւ հարաւ արեւմտեան ուղղութեանց միջավայրը, Ղևիճ կէտուկի ի հիւսիս հակեալ կողերու վերայ, Շեռեանայ աջ ափից <sup>3</sup>/<sub>4</sub> ժամ բարձր: